

դարանին, ուր կան նաեւ Երեմիա Չէլէպիի տաճկերէն լեզուով Յայտնաւորքը, ընդօրինակուած Ս. Էջմիածին 1685ին իր որդւոյն՝ Գրիգոր վրդ.ի համար. եւ 1682ին ընդօրինակուած նամակներ ուղղեալ առ Գրիգոր վրդ.: Երեմիա Չէլէպին վախճանած է 1695ին (Թժայ. էջ 139):

ԵՐԵՄԻԱ ՄՐԿ.— Մբ. 1664ին, Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Տաթեացի Գրիգոր վրդ.ի Ձմրան հասար Բարոզգիրքը (ՄՁ. Թ. 305):

ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ԷՐԶՐՈՒՄՅԻ.— Մբ. Ս. Յակոբի տաճարին աւագ սեղանի վարագոյրներէն մին կը կրէ Երեմիա վրդ. Էրզրուցիին եւ եզրօրը՝ ծաղկարար Յովհաննէսի մասին հետեւեալ յիշատակարանը. «Յիշատակ է Էրզրուցի Երեմիա վրդ.ի եղբայր մհո. Յովհաննէսին որ է գործիւ ծաղկարար յերուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, Թվ. ՌՃՁԱին» (= 1732): Կը վախճանի 1744ին, տապանազիրն է հետեւեալը. «Այս է տապան հանգստեան Էրզրուցի Տէր Երեմիա վարդապետին որ հանգեալ ի Թվին ՌՃՂԳ (= 1744) ամէն ընթերցող տուք գողորմի ամէն»։ Ս. Յակոբի վանքին իր տուած յիշատակներու մասին (ՄՁ. Թ. 532):

ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ԼԻՖՈՌՆԱՆ, ՔԷՍԱՊՅԻ.— Մբ. Ե. 1875ին. Ձռ. 1902ին. նահատակուած է Պիրէճիկ 1915ին:

ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ՄԻՔՍՅԷԼԵԱՆ, ԲԵՐԻԱՅԻ.— Մբ. 1832ին. Ձռ. 1843ին, ՏԲ. և ՏՌ. 1847ին. կը վախճանի 1854ին:

ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ՉՈՐԼՈՒՅԻ.— Մբ. որդի մհո. Կարապետի և աշկ. Պօղոս ՊԿ. Ազրիանուպոլսեցիի. Նւ. Ակնայ և Ռումելիի: Իր այս պաշտօնէն յետոյ, վարած է Կ. Պոլսի փոխանորդութիւնը. կը հրաժարի և կը մեկնի Չորլու և ապա կ'ողւորի իբր Նւ. Ակնայ. կը վախճանի 1838ին: Իր վարդապետին խնդրանքով 1830ին կը յօրինէ Յաճախապատու վրոյ խրթնիմաց խօսքերու լուծմունքը (ՄՁ. Թ. 628):

ԵՐԵՄԻԱ ՎՐԳ. ՍՏԱՄՊՈՂՅԻ.— Մբ. Կարբեցի Մարտիրոս սրկ.ի ընդօրինակած Ժողովածուի (Էջմ. Յուլ. Թ. 647) յիշատակարանին նայելով՝ Ստամպոլցի Երեմիա վրդ. 1725ին Պոլսէն Երուսաղէմ եկող ուխտաւորաց նաւուն մէջ գտնուած է